



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ch. Chhaganlal

Chhaganlal

1902/10.

891. 99

X-42



891.542-3
Q-42

21 JUN 2005 19 NOV 2011
ԵՐԵՎԱՆ

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

891.99

Q-42

175

ՄԱՅՐԵԼ

Արտադպուած „Մուբակա ամսագրից

3971



ԹԻՖԼԻՍ

Տպար. Վրաց Հրատ. Ընկ. || Տիպ. Գրզ. Իզդ. Թ - վա.
Большая Винская ул.

1902



15.02.2013

18471

37489

Дозволено цензурою. Тифлисъ, 12 декабря 1902 года

18471
37489

3676

37489.

Մ Ա Յ Ր Ե Ր Ը

”Շատ ձմեռների սառնամաճիքներ
հալուեցին, հասաւ զարոնը, եկան ծիծեռ-
նակները, կենցաղասէր. մարդիկ տեսան
և ինդացին, բայց նրանք երբէք չը կա-
րողացան տեսնել իրանց սիրելիներին“:

Եղիշել.

I

Թիւղական փոքրիկ եկեղեցու կի-
սախաւարի մէջ խնկի ծուխը պալան-
պալան բարձրանում էր այն երեկոյ և
բակ կապում փոքրիկ լուսամուտների
շուրջը: Կանթեղի ազօտ լոյսի առաջ բա-
հանան մումալով բաղում էր ազօթքնե-
րը և բազմաթիւ ժամաւորները մերթ
գետնատարած խոնաւ խսիրների վրայ,
մերթ ոտքի կանգնած ու բաղկատարած՝

մրմնջում էին մի ընդհանուր ու խուլ
մումոց հանելով՝ կանանց բաժնում սե-
ւազած սեան վրայ կախուած էր Աստուա-
ծածնի նկարը մի մգլած, գեղնած շըր-
ջանակի մէջ և նրա առաջ կանդնած էր
մի տարիքաւոր կին՝ Այդ կինը
և այդ նկարը երկու մայրեր էին, որոնք
նայում էին իրար ակնապիշ և կարծես
ջանք էին անում հասկանալ միմեանց
մաքերը, կարդալ միմեանց սրտերը։ Տի-
րամայրը վերեւումն էր՝ սեան վրայ, Սու-
սանը ներքեւում՝ գետնի վրայ. մէկը
սուրբ էր, կարող և հրաշագործ, միւսը՝
խեղճ, վշտահար, անդօր մի պառաւ,
որ եկել էր նրա առաջ լաց լինելու,
աղերսելու։ Միածնի փոքրիկ, գանդիւա-
հեր գլուխը սղմած իր կուսական կըրծ-
քին, Աստուածամայրը խանդաղատանքով
ու ժպտով նայում էր վար, իր սոների
տակ սողացող, գալարուող բազմութեա-
նը, նայում էր նոյն ժպտով նաև Սուսա-
նին, որ եկել էր ցաւոտ կուրծքը նրա
առաջ բանալու։
Շրջանակի վրայ վեց փոքրիկ, գա-

լար մեղրամնմեր, վշտատեսիլ ու գեղին,
պլազմով վառւում էին և գունատ ու
խորհրդաւոր լուսով՝ երերուն, աղօտ փայլ
էին տալիս Աստուածամօր հեղ գէմբին,
փոքրիկ Քրիստոսի լիքը, ձիւնափայլ
մարմնին, որ այդ փայլի մէջ լողում էր
ինչպէս մուգ լճի վրայ վազորդեան մշուշի
մէջ լողացող սպիտակ կարապը։ Խնկի
ծուխը չորս կողմից կաթնագոյն քու-
լաներով գալարւում, պտոյտներ էր կազ-
մում աստուածային մօր և զաւակի շուր-
ջը և կարծես աշխատում էր իր ծալքերի
մէջ պարուրել և վեր տանել այդ երկ-
նային զայգը. չէ որ նրանք այնքան շատ
բան ունէին պատմելու աշխարհից, այն-
քան արցունքներ Ամենակալի գահի առաջ
փոելու։

Վազուց էր այնտեղ կանդնած Սու-
սանը։ Եկեղեցու զանգի ձայնը լսելուն
պէս նա եկաւ, հասաւ, իր գողդոջուն
ու պառաւ մասներով մեղրամնմերը կըպց-
րեց այրուած, սեացած շրջանակին, համ-
բուրեց, երեսը խաչակինքեց և քարացաւ
իր տեղում։ Մոմերի կէսն արդէն վա-

ոռւել էր և Սուսանը կանդնած էր դեռ
միենոյն տեղում, արտասուաթոր աչքերը
չէր հեռացնում Տիրամօր պատկերից,
գողգոզացող շրթունքներից բառերը թափ-
ում էին, հա թափում, կրակի խօս-
քեր, ցափ, աղերսանքի, պաղատանքի
խօսքեր—Սուսանը աղօթում էր Սրտա-
սուրի կաթիները ժայռի վրայ վշրուող
վտակի ցնցուղների պէս յորդառատ գուրս
էին ցայտում աչքերից և դլորւում ծեր
դէմքի խորչումների վրայով, ու փորրիկ
հոսանուտ ակօսներ կազմում աչքերի
տակից մինչև ծնօտը: Սուսանն աղօթում
էր իր միակ սրգու, իր զարիք, թափա-
ռական Սաքօի համար, որ քանի մի օր
առաջ թռղեց, գնաց դէպի մուժ անյայտը,
դէպի հեռուն...

«Ո՞վ սուրբ Տիրամէր, ասում էր նա,
բոլոր ցաւոտ սրտերի, բոլոր վշտացած
հոգիների, բոլոր մղկտացող մայրերի դու
դթոտ մայր, ձեռքս բո փէշն եմ ձգել,
էրուած, մորմոքուած սիրտս բերել եմ բո
սուրբ ստմերի տակ գնելու. բաց այն,
Տիրամէր, տես, արցունքը մի կողմ; կրա-

կը միւս կողմն են բոնել սրտիս և արցուն-
քը վառ կրակը մարել չի կարողանում, բոցերը շատ են. բաց այն ու նայիր՝ ան-
ճարների մայր, չէ դու սրտերի կրակը
հասկանալ, զգալ գիտես, տես ինչեր
կան իմ եփուած սրտում, ու յետոյ մի
ճար, մի դարման, ողորմած թագուհի:
Իմ ծով մեղքից էս ծեր օրերիս ֆալա-
գը մի դաղ քաշեց սրտիս, մի խորը դաղ
և էրուած տեղը դեռ մխում է, մխում.
դու խօ տեսար, սուրբ մայր, թէ էն մէկ
ջիւանս, սարի պէս տղամարդ, ինչւէս
կտոր կտոր արին անօրէնները, ախ ցու-
ով ծնած, մեծացրած զաւակիս էս կրու-
րած ձեռներովս արիւնոտ գերեզման
իջեցրի: Ի՞նչ անեմ, գուցէ իմ մեղքից,
գուցէ Աստուած էր վրաս բարկացել:
Եյս մէկն էլ գնաց... մղկտացի, աղաշե-
ցի, լաց եղայ, ձեռք ու ոտքն ընկայ, որ
ըլ գնայ, բայց գնաց... Թէ ուր, այն դու
ինձանից լաւ գիտես, Տիրամէր... հեռու
սարերում, ձորերում քարը՝ բարձ, ժայ-
ռըն՝ անկողին, օձերի հետ ջուրը, գաղան-
ների հետ բոնը կիսելով՝ նա թափա-

ոռւմ է և ես անտիրական, անտիրական,
ձեռքս չոր գետնին, սիրտս՝ դոդ, հոգիս՝
ցաւած, օրս՝ սեւ, թաց աչքս դրանը
ըռնած դիշեր, ցերեկ մղկառւմ, վշշում
եմ: Տիրամէր, ողորմած մէրիկ, քո ոտն
եմ եկել, ես էլ չեմ տեսնում նրան,
դու անշուշտ տեմնում ես, ախ, քո բաւ
րի, քո ողորմած, քո քաղցր աչքը նրանից
մի հեռացրու, քո սուրբ հովանին ամպի
պէս նրա գլխից պակաս մի արա; չարից,
ցաւից, դարդից, արիւնից նրան աղատ
պահիր, չէ դու կարող ես, չէ որ թէ
դու ուզես, մութ ամպն էլ նրա դլսով
չի անցնի: Սրտիս վրայ էլ սաղ տեղ չի
մնացել, ողջ լնոցնոտւած՝ պատառ-պա-
տառ է եղած, էլ տեղ չը կայ նոր դա-
նակ միսելու, էլ տեղ չը կայ մի նոր դազ
քաշելու, էլ ճար չը կայ նոր խոց բանալու.
նրա սեւ յատակում, ինչպէս սեւ լիճը
մութ այրում, արիւնը ծով է կապել ու
ցաւերիս բոցերից եռ է դալիս, պղղճում
ինչպէս լի կաթան օջաղի վրայ: Փրկիր
նրան, իմ զաւակին, Տիրամէր, բարեխոս
եղիր նրա մօտ, որ այնպէս սիրով գրկել:

սղմում ես քո սուրբ կրծքին. տես նա ինչ-
պէս փարում է քո մայրական սախնըներին,
ինչպէս ուզում է լսել քո սրտի ձայնը,
մայր, մայր, ախր ես էլ եմ մայր, ես էլ
սիրտ ունեմ, կուրծք ունեմ, մայրական
կաթովս քանիսին կերակրեցի, կրծքիս
վրայ քանիսին ջերմացրի և էլ չը կան,
չը կան, ոչ մէկը չը կայ, ութ ծնունդ-
նստեցի, ութ երկունք քաշեցի, և այժմ
էն մէկն է: Ինչպէս գիմանամ, սուրբ Տի-
րամէր, կուրծքս չոր է, սիրտս մարած,
մոխիր դարձած դարդի բոցից, սպիտակ
մաղերիս վրայ սեւ կապած, մէջըս երկու-
տակ ծալուած, մեռայ գերեզմանները
լիզելով, չոր հողը գրկելով իմ շարան-
շարան արնակոլու մեռելների ու չը կայ
մէկը, որ սզմեմ կրծքիս, չը կայ մէկը,
որ իմ սրտի ձայնը լսի, չէ ես էլ խեղճ
եմ, մեղք եմ, մայր եմ, պառաւած, անզօր
մայր, ով գու բոլոր թշուառների, խեղճ-
ների, անճարների ողորմած մայր: Ուխտ
եմ անում քո սուրբ պատկերի առաջ, թոնդ
լսի ինձ մեր ամենի տէրը, սուրբ Աստ-
ուածորդիդ, ամեն երեկոյ այստեղ քո ա-

ոաջը կը վառեմ վեց մոմը, կ'ընկնեմ, կը
լիզեմ սառը հողը. անճարի պէս վէշե-
րիցդ կը կախուեմ; քեզ հանդիստ չեմ
տայ, քո աչքից չեմ հեռանայ, այստեղ
կը ճչամ, կը լամ, կ'աղաղա-
կեմ երկնքովք մէկ, որ դու ինձ լսես, որ
իմ միակ գաւակին փրկես, պահես, պաշտ-
պանես: Օ՛, ողորմած Տիրամէր, քո
սիրտը լայն է, սէրդ՝ անչափ, մենակ
նրան մի հասիր, աղաչում եմ, նախ հա-
սիր բոլոր ուրիշ անճարներին, խեղճե-
րին, նեղեալներին, քեզ կանչողներին,
որ այնքան շատ են մեր վէրան աշխար-
հում, մեր սե երկնքի տակ, ամենից վեր-
ջը միայն իմ ձայնը լսիր, մեղաւոր սրտիս
ինդերը կատարիր, մայր, մայր, բոլոր
վշացած հոգիների, անտէրանճարների
ողորմած մայր»:

Մոմերը մէկիկ-մէկիկ այրուեցին ու
մարեցին, Աստուածածնի և Քրիստոսի
դէմքերը կամաց-կամաց լուծուեցին ու
կորան խաւարի մէջ. քահանայի ձայնը
լուեց, աղօթաւորների մրմունչները դա-
դարեցին, եկեղեցին դատարկուեց, կա-

նանց բաժնից էլ սպիտակ չարսաւաւոր
ստուերներն իրար յետեւից մեղմով դուրս
դնացին. Սուսանն այնտեղ մնաց մենակ
և գեռ աղօթում էր, գեռ նա աչքերը
վար չէր բերում Տիրամօր պատկերից,
գեռ չորացած բազուկները տարածած
նա օգնութիւն, գթութիւն էր աղերսում
և լալիս էր ու լալիս...

— Ո՞րդի, այ Սուսան խաթուն.

Սուսանը շարունակում էր աղօթքը,
այժմ նա ծունկ էր չոքել և չէր տեսնում,
թէ ինչ է կատարւում իր շուրջը, չէր էլ
լսում ոչինչ:

— Սուսան խաթուն, ուշ է, ժամը
պրծաւ, որդի:

Կինը գլուխը բարձրացրեց, խօսողը
ծերունի քահանան էր:

— Տէրտէր ջան, աջիդ մեռնեմ, աղօ-
թում եմ:

— Հա, որդի, դիտեմ, որ աղօթում
ես, լաւ ես անում, թնդ Աստուած լսի,
ասում եմ, որ ժամը պրծաւ, էլ մարդ ըլ
կայ, տե՛ս:

— Դու դիտես չէ, հայր ջան, էն

մէկն էնպէս բէմուրագ եղաւ, մէկէլները
դնացին, արեան ծով էր, խեզդեց բոլորին,
էս մէկն էլ չոլերն ընկաւ, եռ եկել եմ
Աստուածածնի փէշերից կախուել:

— Լաւ ես անում, զաւակս, լաւ ես
անում, բայց ուշ է արդէն:

— Գիտես, հայր ջան, չեմ թողնի,
չեմ թողնի նրա փէշերը. ամեն օր էսպէս
կը դամ, ես ինչ եմ արել, որ էսքան սեւը
մենակ բաշեմ, որ էսքան յաւը մենակ
ինձ տան, մեզը չեմ, մայր եմ է՛մ, սա էլ
մայր է, էս Տիրամէրը, տես, տես ինչ-
պէս գրկել է իր զաւակին, տես ինչպէս
սղմում է կրծքին, իսկ ես ոչ ոք չունեմ,
ոչ ոք: Դու դիտես չէ, աէրտէր ջան, չէ
ըեղ հետ գրինք հողը արնակոլով զաւակ-
ներիս:

— Հա հա, որդի, դէ հիմա բաւա-
կան է, մնացածն էլ էգուց:

— Տէրտէր, ոտիդ մեռնեմ, դուման
բռնեց իմ գլխին, ինչ դուման, սար ու
ձոր մթնեց. էս չար օրերին, էս չար ժա-
մանակին, նա էլ թողեց, դնաց... ես էլ
մւր դնամ, չոր գլուխս մւր տանեմ, դէ

Տիրամէրն այստեղ է, ամեն օր կը դամ,
մոմ էլ կը բերեմ, կիրակիներն էլ թագայ
հաց կը թխեմ, կը բաժնեմ, մատաղ կ'ա-
նեմ, արյունք էլ դեռ ունեմ, աչքերս դեռ
չեն մարել, այ էս հողը կը թրջեմ, դէ
նա էլ մայր է, սիրտ ունի, սրտի մոմու-
ռը կը հասկանայ, մի ճար կ'անի, էնպէս
չէ, հայր ջան:

— Այդպէս է, որդի, ամեն օր արի,
ազօթիր, Տիրամէրը ողորմած է, բարե-
խօս կը լինի, իսկ հիմա գնանք, տես
այսօր ուշ է, մոմերդ մարել են:

Սուսանը կարծես միայն այժմ նկա-
տեց, որ մոմերը վառուել, վերջացել են,
նայեց վեր, խաւարի մէջ, սեան վրայ պատ-
կերներն էլ չեն երեւում, էլ Աստուա-
ծածնի կարմիր պարեգօտը և կապոյտ
ծածկոցը չէր նշմարւում, էլ նրա հեղ
աշքերը ժպտով չեին նայում վար, փոք-
րիկ Փրիստոսի ձիւնաթոյր մարմինը եկե-
ղեցու խաւարամած մթնոլորտում էլ չէր
լողում մի կտոր ճերմակ ամպի պէս, այդ-
բոլորի փոխարէն, փոքրիկ, ծխոտ շրջա-

նակի մէջ հազիւ նշմարւում էին մի քանի
անորոշ բծեր, մութ ստուերներ:

Սուսանը խաչակնքեց երեսը ու կա-
մաց-կամաց երերալով դուրս գնաց: Քա-
հանան կանգնած նայում էր նրան յետե-
փց և երբ այդ փոքրիկ, դողդոջուն
ստուերը իսպառ ծածկուեց դրսի խաւա-
րի մէջ, նա գլուխն օրօրեց խորհրդաւոր
ձեւով.

Խեղճ կին, ասաց նա կամացուկ,
ինչ է լինելու վերջը, խելքն արդէն կար-
ծես տեղը չէ. փառք քեզ Աստուած, հա-
զար բերան փառք:

Դուրսը մութ էր:

II

Էլի գարուններ եկան բոլորեցին
Սուսանի գլխով, էլի գաշտ ու ձորեր ծա-
ղիկներով ու կանաչներով ծածկուեցին:
Բակի մի հատիկ խնձորենին մի քանի ան-
դամ ծաղկեց և բուրմունք արձակեց
իր շուրջը, պատերի նեղ ճեղքերի մէջ
ճնճղուկները բուն դրեցին և ձագեր հա-

նեցին. Հօտերն ու նախիրները դաշտերը
կենդանացրին, իսկ արագիլներն արդէն
մի քանի անդամ չուեցին հեռու, հեռու
և կրկն վերադարձան: Էլի աշուններ
եկան իրանց վհատեցուցիչ քամիներով և
ծառերի տերեւնները լիզեցին, թռչուններն
ահագին ու տխուր երամներով թողին ու
հեռացան դեղնած դաշտերից. կոռնկ-
ները վշտոտ կզզոցավ սեւ ցելերի վրայ
հատիկներ մուրալով երկնքի երեսից ան-
ցան, բայց Սուսանի որդին չը կար ու չը
կար: Մենակ էր Սուսանն իր խրճիթում,
մենակ ու մոռացուած, նրան միսիթարիչ
ու ընկեր մնացել էր իրանց ծեր շունը,
որ իր տիրուհու պէս այնքան բաներ էր
տեսել և նրա պէս կարծես սպասում էր
մէկին: Երբ գարնանը բակի խնձորենու
վրայ առաջին կոկնները բացւում էին,
Սուսանը նայում էր ուշադրութեամբ
ծառի ճիւղերին և դառնում իր ոտների
առակ թաւալող շանը:

— Բնագար, խնձորենին ծաղկել է,
շուտով նա կը գայ, այնպէս չէ:

Եւ Բօղարը օրօրում էր իր պոչը,

շեշտակի նայում տիրուհու աջքերին ա-
սես ի նշան համաձայնութեան։ Անցնում
էր գարունը, անցնում էր ամառը, էլլի
վրայ էին հասնում աշնանային ցրտերը,
խնձորենին մերկանում էր տերեւներից
և տիրութեամբ օրօրում իր կատարը
ցուրտ հովերի առաջ, Սուսանը նայում
էր վշտով և կրկին դառնում իր շանը.

—Բօղար, չեկաւ, չեկաւ բէբաղդը,
դարնանը կը դայ, այնպէս չէ։

Եւ շունը կրկին օրօրում էր իր պոշը
և պառաւն սպասում էր յուսովնոր դար-
նանը, որ խնձորենին ծագկի, որ թռչուն-
ները վերադառնան և նրանց հետ միա-
մին Սաքօն յայտնուի։

Նա սպասում էր և Սաքօի համար
կամաց-կամաց պատրաստում էր փափուկ,
շատ փափուկ անկողին։ Բուրդը հաւաքել
էր տարիների ընթացքում և մատներով
մաքրում էր ամեն օր, ապա կարում և
անկողինը գնում էր ծալքը, յետոյ նրան
թւում էր, թէ հարկաւոր է քանդել, նո-
րէն փափկացնել ցած էր բերում և

վերսկսում տասն անգամ կրկնած աշխա-
տանքը

Դրա հետ միաժամանակ նա կատա-
րում էր իր ուխտը սրբութեամբ. ամեն
երեկոյ գնում էր եկեղեցի, վեց մոմբ
գողդոջուն ձեռքքով կպյունում Տիրամօր
պատկերի սեւացած, այրուած շրջանակի
վրայ, ձեռքերը տարածում էր դէպի վեր,
դէպի երկինը և աղօթում, աղօթում։ Եւ
ամեն երեկոյ աղօթքից յետոյ, երբ բոլոր
ժամաւրիները դուրս էին գնում, նա
դառնում էր տէրտէրին։

—Սաքօն կը դայ, այնպէս չէ, տէր-
տէր։

—Հա, որդի, ի հարկէ կը դայ, ըս-
անքան արցունքը, աղօթքները...

—Բերանդ տաճար է, տէրտէր ջան,
տաճար, բերնիդ մեռնեմ, ասան, ասան,
այսպէս ասան, դու որ ասում ես, Տիրա-
մէր էլ ժպտում է, յոյսը սրտիս մէջ
վորդի պէս բացւում է։

—Հապա, որդի, Տիրամէրը ում
ինդիրն է թողել անկատար, երկնը



դոները նրա բարեխօսութեան առաջ միշտ
բաց են:

Եւ Սուսանը յուսով ու հանգստա-
ցած տուն էր վերադառնում, ուր նրան-
սպասում էր Յօդարը, որ կաղկանձելով
փաթաթւում էր տիրուհու ոտներին:
Սուսանը, հաւատացած էր, որ որդին կը
դայ, անպատճառ կը դայ, ի՞նչպէս կա-
րող էր Տիրամայրը խաբել նրան, նա-
այնպէս ժպտով, այնպէս քաղցր է նա-
յում վերից, երբ Սուսանը մոմերը վա-
ռում է և ազօթել սկսում: Ի՞նչպէս կա-
ռող է նա չը լսել մի մօր աղաչանք, որ
այնքան տառապել է, այնպէս տան-
ջուել, այնքան լացել: Մրմնջացել: Ի՞նչու-
պէտք է Տիրամէրը այնքան ցաւեր միայն
նրան բաժին տայ, մէկ էլ ի՞նչ դժուար
է նրա համար կատարել մի մօր այսքան
աղաչանքը: Որ նա կամենայ, որ նա մի
քաղցր աչք է, բաւական է, մնացածը
քաղցր աչք է, բաւական է, մնացածը
կաշտ է, Սուսանի որդին ինքն իրան կը
դայ ողջ և առողջ:

Եւ ամիսներ ու տարիներ էին անց-
նում Սուսանի դլխով, որդին չը կար ու

չը կար, բայց նա չէր յուսահատւում,
Տիրամէրը ժպտում էր և նա հաւատա-
ցած էր, որ Սարօն կը դայ:

—Տիրամօր վէշիցն եմ բռնել, ասում
էր նա յաճախ իր հարեւաններին, Տիրա-
մօր վէշից... չըրս տարի է, նա ինձ ա-
մեն օր ժպտում է... նա ինձ խոստանում
է... Տիրամօր ժպի տը...

Հարեւանները լսում էին և խորհր-
դաւոր ձեւով դլխումներն օրօրում կրկնելով
—Խեղճ կին, խեղճ կին:

Սուսանը սպասում էր... նա յաճախ
երեւակայում էր այն օրը, այն վայրկեա-
նը, երբ զաւակը կը դայ... նախ բակի-
դուռը ճուռում է բարձր, յետոյ թրը՝ իկ,
ծածկւում է... շունը, այս խելօք Բօդարը,
վաղում է կատաղած, բայց յանկարծ
ձայնը կտրում է, չներն ախր չեն մո-
ռանում տէրերին՝ այնպէս չէ, Յօդար,
դու խօմ չեմ մոռացել Սարօն, դառնում
էրնա շանը. կենդանին նայում էր խելա-
ցի աչքերով և կարծես ուզում էր ասել,
հա, ի հարկէ չեմ մոռացել: Երեւակայա-
կան պատկերը շարունակւում էր, շունը

լոռում է, թաւալւում է գետնին, փա-
թաթւում է նրա ստներին, կաղկանձում
ուրախութիւնից ինքը՝ Սուսանը, այդ
ժամանակ նստած է սրահում, դէ ծեր է,
աչքերը լաւ չեն տեսնում, համ էլ որդին
փոխուել է, քանի տարի է... նայում է
և չի ճանաչում. ահա նա մօտենում է,
մօր ստները գողդողում են, փորձում է
վերկենալ, բայց չի կարողանում, բարձրա-
նում է՝ ընկնում, վեր է կենում, դար-
ձեալ ընկնում, առաջ է ձգւում բոլոր
ուժով, ոյժ է դործ դնում և ձեռքերը
տարածած փաթաթւում է նրա պարա-
նոցով.

—Ա՛խ բոռանամ ես... դու ես, Սա-
քօ ջան... դու ես... դէ հիմա թաղիր
ինձ, եկամր... երբ եկար... ախր ես մեղք
եմ... Տիրամիշն ասաց կը դաս, և եկար,
դէ հիմա թաղիր ինձ... և արցունքները
թափւում են և Սուսանը երջանիկ է...
Օրական մի քանի անգամ այս սփո-
փիչ պատկերը գալիս է, անցնում նրա
աչքի առաջից. նա ինքն իրան տեսնում

է գրկախառնուած որդու հետ, լալիս է
և արցունքները զովացուցիչ են:
Եւ ի՞նչ լաւ է, լաւ է այդ բոլորը...
Մի ժամանակ նրա համար երդում
ներից գերագոյնը իր որդու արեւն էր,
որդու գլուխն էր. վաղուց է, որ նա այդ
թողել է, այդ արեւը այժմ շատ է հե-
ռու, շատ է թանկ, որպէս զի մայրը յանձն
առնի հեշտութեամբ «բերան բերել» ա-
մեն անգամ. այժմ նա երդում է որդու
դալուստով.

—Որդուս դալուստը վկայ... և նա
արտասանում այդ երեք բառը այնպիսի
շեշտով, այնպիսի հաւատով. այդ երդու-
մը նրա սրբութիւն սրբոցն է, նրա կեան-
քի սիւնն է, նրանով է ապրում, չնշում,
հաւատում. նայում է դռանը և սպասում
այն թրիսկոցին, որ նուիրական դալուս-
տը պիտի աւետէ:

Տարիներն անցնում են տարիների
յետեւից, խնձորենին ծաղկում է ու մեր-
կանում, տարափոխիկ թռչունները գը-
նում են ու գալիս, Սաքօն չը կայ, բայց

Սուսանը շարունակում է աղօթել, շարունակում է հաւատալ ու երդուել.

—Որդուս գալուստը վկայ...

Հարեւանները լսում են, գլուխներն օրօրում:

—Խեղճ կին, խեղճ կին:

Եւ Տիրամէրը ժամում ժպառմ է, յուսատու, պայծառ ժպտով. Սուսանն իրաւունք ունի կրկնել՝

—Որդուս գալուստը վկայ...

III

Այն գիշերը... ախ այս աշնանային գիշերները ինչու իրանց խաւար ծալքերում բերում են միշտ այնքան սեւ, այնպէս անորոշ, խեղդող զգացմունք: Դրաից լսում է մանրամաղ անձրեւի կրկտոցը, և կտուրներից ու պատերից կաթկաթում է ջուրը անվերջ, յուսահատեցուցիչ միակերպութեամբ՝ ճլը՝փ, ճլը՝փ, ճլը՝փ... դրսում, մութ փողոցներում անց ու դարձը վաղուց դադարել է. այդպիսի

չար ժամին որ աղամորդին դուրսը կը մնայ:

Սուսանն անքուն է դեռ. նա նստած է և մտածում է իր Սաքօի մասին. ուր է նա այժմ, որ չօրում, որ ձորում, որ այրի մէջ, կամ ժայռի տակ կծկուած: Սարերում այժմ ինչպէս ցուրտ է. նա էլ երեւի թրջուած է, կրակ չունի, ինչպէս վառի, նրանք կրակ չեն անում, այն թափառականները, որ վառեն, լաւ չէ, ասում են... հիմա ինչպէս մրասումէ իր Սաքօն, այսպիսի գիշեր...

—Օ՛, քոռանամ ես, որդի, հոգիս դուրս գայ քեզ համար. ճվ սուրբ Տիրամէր, քեզ եմ ապաւինել, դու բարեխօս եղիր:

—Օ՛վ գիտէ, գուցէ Սաքօն սարերում չէ, շարունակում է մտածել Սուսանը, գուցէ հենց գալիս է, չար գիշեր է, բայց նա կարող է գալ, տղամարդ է, այն էլ սարերի տղամարդ, որ ուզի, կը գայ:

Անցեալ օրը ինքը թափառական գընչուին ֆալ բացել տուեց, նա ասաց. «Սարերին թառող արծիւը այս օրելս ցած կը սլանայ»:

— Յետոյ:

— Յետոյ... գնչուն նայեց իր եղունքին, մնաց մտածկոտ, կմկմաց, յետոյ... շարունակեց նա, յետոյ նորէն վեր կը բարձրանայ:

Վերջին խօսքերը լաւ չէին, մտածում է Սուսանը. «Սարերում թառող արծիւը ցած կը սլանայ», այդ լաւ է, «յետոյ վեր կը բարձրանայ», ի՞նչ կը լինէր, որ անիծուածը վերջին խօսքերը չ'ասէր. ուշրեմն Սաքօն կը դայ, էլի կ'երթայ, բացատրում էր Սուսանը:

— Հա, հա, արի, արծիւս, արի, թառլանս, ցած արի մէկ տեսնեմ; որ ողջ, առողջ ես, մէկ համբուրեմսիրուն ճակատդ, մէկ երեսս երեսիդ քսեմ, մէկ գլուխդ կրծքիս սղմեմ, էս քոռացած աչքերովս մէկ կուշտ կուշտ նայեմ քեզ, ու էլի գնա, թնդ Տիրամէրը քեզ պահի, որդի, թէկուզ սարերի վրայ, ձորերի մէջ. դէ որ գնում ես, ես սեւաւորս ի՞նչ կարող եմ անել, դու խօ արծիւ ես, գնչուն ասաց, արծիւ բալա:

Թրսում շարունակում է բար լուս-

թիւնը. շներն էլ չեն հաջում, նրանք անձրեւի տակ տղկուած՝ ըաշուել են զանազան ծակ ու ծուկ մտել, ոտ ու գլուխ իրար խառնած, կծիկ դարձած՝ մրափում են այս դէպի տակ, այն դռան առաջ: Եւ անձրեւը շարունակում է մաղուել, և ջըրերի ձայնը լսւում է միակերպ, անվերջ ճլը՛փ, ճլը՛փ, ճլը՛փ... Զար, վատ գիշեր է, բայց Սուսանն էլի սպասում է իր որդուն, գնչուն ասաց՝ «արծիւը ցած կը սլանայ, էլի վեր կը բարձրանայ»...

— Թող ցած սլանայ և էլի վեր բարձրանայ, գոնէ տեմսեմ, թէ աղատ է ցաւից, չոռից, գոնէ...

— Թրը՛խկ, թրը՛խկ, թրը՛խկ...

Բակի դուռն են թակում, Բօղարը հոփաց եւ նետուեց դէպի այն կողմը:

— Թրըխկ, թրը՛խկ...

Սուսանը ցնցուեց ու դողաց բոլոր մարմնով, բայց ինքն էլ չխմանալով ինչու, մի վայրկեան մեխուած մնաց իր տեղում անշարժ և ամբողջապէս լսողութիւն դարձած, բերանաբաց, շնչակտուր, նա լսում էր, թէ ինչպէս շունը կատաղաբար չանգ~

ոռւմէ գուռը և ինչպէս դրսից խփում են.
—Թրը՛ խկ, թրը՛ խկ...

Այս անդամ նա վեր թռաւ տեղից,
երերալով վազեց տան դուռը բանալու,
այդ սովորական դործն այժմ նրան չի
յաջողուում, մի բան է պատահել փակին
և սողնակը յետ չի գնում. նա քաշըում
է, թափ է տալիս, ի զուր, ինկ շունը դըր-
սում հաջում է կատաղաբար և դուռը
թակում են դրսից.

—Թրը՛ խկ, թրը՛ խկ...

Վերջապէս նա դուռը բացեց և դուրս
եկաւ խրճիթից, նա բակումն է, անձրեց
թափում է դլիխին, բայց նա դողդողա-
լով, հեւալով, ցեխերի մէջից երերալով,
տնքալով վազում է դէպի բակի դուռը.
սաստիկ շտապելուց նրա ոտները խառն-
ում են զգեստի ծալքերին և երեսի
վրայ ընկնում է ցեխերի մէջ. թըրջում է
խապառ, այդ էլ նրա փոյթը չէ, նա վեր
է կենում և դարձեալ վազում. ահա և
բակի դուռը:

— Սուս, սուս, Բօղար, նա է, նա է,
զկուես դու, սուս, թող որ դուռը բա-

նամէ Եւ դարձեալ դուռը չի բացւում,
ձեւները դողում են, սիրտը թոթուում է
ասես կրծքից դուրս փախչելու համար,
վերջապէս ճռռալով դուռը բացուեց, այժմ
խաւարի մէջ նրա առաջ կանգնած է մի
մութ մարդկային ստուեր, հաղիւ հաղ
նկատելի:

—Ո՞վ է... ով ես դու...

—Ես... ես Աստուծու մարդ եմ...
անմիսաս ու անպէտք. դողում եմ ցրտից,
թրջուած եմ, հեռուից եմ դալիս... ու-
շացայ, անձրեսի տակ մնացի, մութը վրայ
հասաւ սարերում, նոր հասայ, Ես ան-
պէտք մարդ եմ. Աստծու արարած...
Տես, ես դողում եմ, մի տեղ, մի կրակ,
մի ճար, Տիրամօր սիրուն...

—Տիրամօր սիրուն, կրկնեց Սուսանը
մեքենայաբար, մի վայրկեան լուեց, յու-
սահատ զայլոյթով կրծուտեց շրթունքնե-
րը մրմնջալով.

—Նա չի, նա չի, օ՛, անողորմ մարդ:

—Զար դիշեր է, շարունակեց անձա-
նօթը, խեղճին ով տեղ. կը տայ, բանի
դուռ եմ թակել, բացող չը կայ, վախե-

նում են, ես անպէտք մարդ եմ, էլի վախենում են, գէ ես էլ Աստծու ստեղծածն եմ:

—Աստծու ստեղծածը... հա, ալամորդիներն Աստղու ստեղծածներն են, ասաց Սուսանը, բայց մտածում էր ուրիշ բան և բիչ մնաց ասէր՝ անողորմ, անաստուած մարդ, գու անպէտք ես, բայց ոչ անվասա, տես, թէ ինձ ինչքան վսաս տուիր, սրտիս թելլ կտրուեց, ոտներս դողում են, ես թուկանում, ես մեռնում եմ... ում էի սպասում, ով դուրս եկաւ. մրսում ես, ջհանդամը թէ մրսում ես. թրջուած ես, էն լաւ է որ թրջուած ես. զու տեղն է, գու ինձ տանջեցիր, սարերում մէկը կայ, քեզնից լաւ է, նա էլ է թրջուած, նա էլ է մրսում և նա էս չարժամին ոչ ոքի դուռը չի թակի. Սուսանը մտածում էր այս բոլորը, ուզում էր ասել բարձրածայն, ճչալով, ուզում էր դուռն էլ շրիմալով ծածկել ճամբորդի երեսին, թողնել, որ նա դողայ դրսում, բայց չը կարողացաւ, մտածածը

չասուեց, ծնօտները փակուեցին, մի առժամանակ մնաց լուռ:

—Ղարիբի տէր եմ, դու էլ զարիբ ես, ներս արի, ասաց նա վերջապէս:

—Տիրամէրը հասնի զարիբին:

—Հա, Տիրամէրը հասնի զարիբին. սուս, Բօղար, սուս, մի զայրացիր, ինչ անենք, Աստծու ստեղծածն է, խեղճ է, անճար է. Տիրամէր, բոլոր անճարներին, բոլոր տառապեալներին հասիր, յետոյ նրան, միմնջում էր պառաւը ցեխերի միջից դանդաղութեամբ բայլելով և օտարականը հետեւում էր նրան:

Ներս մտան. Ճիթէ ճրադը պլազում էր. պառաւը դարձաւ, նայեց օտարականին: Ծեր մարդ էր, սպիտակ մազերով ու միրուքով. խղճուկ զգեստները ողջ թըրջուած՝ ծլանքներից յուրը կաթկաթում էր: Նա դողում էր ցրտից ամբողջ մարմնով: Նրա մի ուսից կախուած էր մի պարկ, կիսով չափ լի հացով, իսկ միւս ուսից մի երկար բան, որ սազի էր նմանում: Սուսանը նայում էր ուշադրութեամբ.

—Աշուղ ես, հարցըց նա:

— Զէ, մէրիկի, աշուղ չեմ, այլ դպրար,
ես թափառում եմ գիւղից գիւղ, գոնից
դուռ, գզում եմ բուրդ ու բամբակ, ով
տալիս է. այս էլ աշուղութիւն է, մէրիկ,
տես ես զարկում եմ այս լարին,
նա ցոյց տուեց իր գործիքը. և նրա
հաստ լարը լաց է լինում իմ հարուած-
ների տակ, և լալով բուրդ է գզում, այդ
լացի գնով, սեւ օրով ես ապրում եմ. ինչ
անեմ, մէրիկ, ջիւանները արնակոլով ե-
ղան մեր վերան աշխարհում, ես եմ մնա-
ցել, ծեր օրերիս, սեւ օրերիս դռնէ դուռ
թափառական։ Անպէտք եմ, մէրիկ, ան-
պէտք Աստուած հոգիս էլ չի առնում, որ
ազատուեմ։

— Սուս, սուս, ողորմելի, Աստծու
դէմ մի խօսիր. նրա ստեղծած արարած
ների մէջ անպէտքը չը կայ. Երբ նա կա-
մեցել է քեզ աշխարհ ձգել, լուս, պա-
պանձուիր ու քաշիր ճակատագիրդ։ Դէ,
հան այդ պարկդ, դէն գիր մէջքիդ գոր-
ծիքները, լարն ու աղեղը, մօտեցիր թոն-
րին, տաքացիր, շորերդ չորացրու։ Ան-
ճարին մի ճար միշտ կը լինի, Տիրամէրը

վկայ, թող նա համնի բոլոր զարիբ-զուր-
բաթներին, յետոյ նրան, նրան, էն սա-
րերի արծւին.

«Ե՞րբ կը գայ...» վելջին խօսքերը նա
արտասանեց ինքն իրան։

— Են մնաս, մէրիկ, շէն մնաս, թող
Աստուած քո սբաի բոլոր ուխտը կատարի,
օլաղիցդ՝ կրակ, տաշտիցդ հացն անպակաս
անի։

Օտարականը վար գրեց իր պարկը,
ցած բերեց ուսից գործիքները, մօտեցաւ
թոնրին, կծկուեց ու մնջեց։ Դրսում ան-
ձրեւը շարունակում էր, չուրը կաթկը-
թում էր միակերպ, անվերջ ճլբոցով,
խաւար էր ու ցուրտ։ Սուսանն անքուն՝
դեռ երկար ժամանակ շարունակում էր
մտածել նրա մասին, որ սարերում, այ-
րերում մրսում, դողում է այս չար գիշե-
րին։

— Դու համնես, Տիրամէր, դու բա-
րեխօս լինիս, մրմնջում էր նա, և սիրով
ճլմլում էր ցաւից։

IV

Լուսացաւ. մնձրեւը դադարեց. բաշուեց աշնանանային մի ցուրտ ու պայծառ օր։ Մարդիկ դուրս սողացին բնակարաններից։ Սուսանի հիւրը նոյնպէս պատրաստում էր դուրս ընկնել իր գիշերային ապաստարանից։ Նա դանդաղութեամբ վերցրեց իր պարկը, կախեց ուսից, առաւ նաև բուրդ գզելու գործիքը և դարձաւ Սուսանին։

— Են մնաս, մէրիկ, օջաղդ վառ մնայ։

— Գնում ես։

— Հա, գնում եմ ցնցոտիներս ու անպէտք գլուխս երկրէ երկիր, գիւղէ գիւղ, դոնէ դուռք քաշ տալու, մինչև մի աեղշանսատակ լինեմ ու մաշուած, տրորուած ոսկորներս հանդիստ առնեն։ Եւ մինչ օտարականը խօսում էր, պառաւը մտածում էր, տեսնես սա չի տեսել նըրան, էն սարերի արծուին։

— Լսիր, դու շատ ես ման եկել։
— Շատ, խիստ շատ։

— Սարերում, ձորերում։
— Սարերում, ձորերում։
Պառաւը գլուխը քաշ ձգեց ու լոեց։
— Ինչու ես հարցնում, մէրիկ։
— Եհ, հէնց էնպէս, տեսնում եմ,
որ շատ աանջուած ես։

— Հա, մէրիկ, տանջանքը իմ եղրայրն է, մենք միասին ծնուեցինք, այժմ էլ անբաժան ենք։

— Տանջանքը քո եղբայրն է, էէ։ խեղճ մարդ, ես էլ նրա պէս մի քոյր ունեմ, ասում էր պառաւն ինքն իրան։ Նա մտածկոտ էր, կարծես և՛ ուզում էր մի բան հարցնել և՛ վախենում էր պատասխանից։ Օտարականը երեւի այդ նկատում էր և սպասում։

— Լսիր, դու սարերում արծիւ տեսել ես, հարցրեց Սուսանը։ Նրան թուաց, որ այս օտարականն էլ պիտի հասկանայ, որ արծիւ նա է, Սաքօն է։ Տիրեց լութիւն, նրանք նայում էին իրար ուշադրութեամբ, օտարականը չը հասկացաւ տարօրինակ հարցը։ Սուսանն այդ նկատ 3

տեց և կարծես արդարանալու համար
շարունակեց.

— Գնչուն ասաց՝ «Սարերի արծիւր
ցած կը սլանայ, էլի վեր կը բարձրաւ
նայ», սպասեցի՝ ցած չը սլացաւ, ինչու»

Օտարականն այժմ նայում էր աւելի
զարմացած, հարցն աւելի քան օտարու-
թի էր:

— Բան չեմ հասկանում, մէրիկ, ասաց
նա, ես արծիւ չեմ տեսել, ու օր շատ
եմ տեսել, խեղճ ու կրակ գլրար եմ; քո
յարկի տակ աղ ու հաց կերայ, թէ բուրդ
ունես, բեր գղեմ, գնամ իմ ցաւը հո-
գամ:

Պառափ աչքերը փայլեցին. նրա գըլ-
խով կարծես մի լուսաւոր միտք անցաւ.
որդու անկողինը, այդ ինչպէս է, որ նա
մոռացել է:

— Բուրդ, հա, բուրդ ունեմ; ինչ լաւ
ասացիր, ողորմի հօրդ, գղելու բուրդ, որ
փափուկ լինի, էնպէս չէ, որ գղեն, բուրդը
փափուկ է լինում; անկողինն էլ լաւ. մա-
տերովս եմ քրըել, բայց այդ քիչ է:

Եւ նա ծալքից ցած բերեց որդու

անկողինը, քանդեց, բուրդը գուրս թա-
փեց գլրարի առաջ.

— Ա՛յ, գզիր, զարկ, լաւ զարկ լա-
րիդ. թող փափկի:

Օտարականը գործիքը ցած բերեց
ուսից, հացի պարկն էլ մի կողմ գրեց,
ծունկ չոքեց և սկսեց զարկել իր գոր-
ծիքի հաստ լարին: Բուրդը գզւում էր
ամպերի պէս ըուլա ըուլա բարձրանում,
իսկ լարն ասես լալիս, հեծում էր նրա
հարուածների տակ:

— Լաց, լաց ընկեր, մոմուում էր նա,
ցաւով ենք ծնուում, լացով վաստակում,
արիւնով գերեզման մտնում. լաց, լաց
իմ խեղճ ընկեր. մեր աշխարհում ով չի
լալիս, սար ու քարն էլ է անքում: Եւ
լարը հեծեծում էր և բուրդը գզւում
բարդ, բարդ բարձրանում:

Սուսանը լռութեամբ և հիացմուն-
քովնայում էր: Քործը շարունակւում էր,
գլրարն այս անդամ և՛ զարկում էր և՛
երգում, կարծես իր լարի հետ մէկտեղ
հեծեծում էր ու լալիս. նա ասում էր.

«Գարահիսար լեռան կրծքին նա էլ
ընկաւ վիրաւոր,
Կուրծքը պատռած, սիրտը խոցուած
չար թշնամու գնդակով.
Ժէռոտ լեռան լերկ կատարից վար
սլացիր սև արծիւ,
Թևերդ բաց, լայն թևերդ ու ջիւա-
նին հով արա:
Խոցուած սրտից մուգ արիւնը կա-
թիլ կաթիլ կը ծորայ,
Ա՛խ ջիւանի կեանըն է հոսում ցա-
ւոտ կրծքի լայն վերքից.
Ժէռոտ լեռան լերկ կատարից վար
սլացիր սև արծիւ,
Թևերդ բաց, լայն թևերդ ու ջիւա-
նին հով արա»:

Սուսանը լսում էր սկզբում ուշադ-
րութեամբ, բայց կամաց-կամաց նա կար-
ծես մի մեծ սարսափի առաջ աչքերը
չուեց ու գունատուեց.

— Այդ ի՞նչ ես երգում... այ մարդ.

Օտարականը գլուխը բարձրացրեց,
գործը թողեց, նայում էր, զարմացած

այս կնոջ յուզմունքի վրայ և կարծես խօսք
չէր գտնում պատասխանելու:

— Սնւս, սուս, անողորմ, շարունա-
կեց Սուսանը, թող այդ սեւ արծուի
երգը, ես սեւը չեմ ուզում, գնչուն այդ-
պէս չ'ասաց, վեր կաց շուտով հեռացիր,
Աստուած քեզ հետ, երգիր քո սեւ ար-
ծիւն ուրիշ տեղ, ես վախենում եմ քե-
զանից, վախենում եմ քո երգից. ես
գողում եմ քո շրթունքներից, նրանց շար-
ժումներից, վակիր բերանդ, աղաչում
եմ, քեզանից կախուած չէ, ուտուան-
ձուիր, թող սեւ արծիւը սարի կատարին
մնայ... Զիւան... արիւնաքմ... Տիրա-
մէր, Տիրամէր, ես վախենում եմ այս
սղորմելուց, գու ի՞նչ կ'ասես, եաման Տի-
րամէր... գնա, գնա:

Օտարականը շփոթուած՝ շարունա-
կում էր նայել.

— Ինչու, մէրիկ, ի՞նչ արեցի, չէ գու
ասացիր, որ բուրդ գզեմ, ի՞նչ վատ բան
ասացի, մռմռում եմ ինձ համար: Սու-
սանը լսել չէր ուզում:

— Գնա, գնա, գնա, ի սէր Աստուծոյ

գնա, դու բէխէր մարդ ես, քո բերաւնից մահ է թափւում, ես դողում եմ, գնա...

Օտարականն այս անդամ վերցրեց գործիքն ու պարկը, ձգեց ուսերին և վճռական քայլուածքով դուրս եկաւ խըսրածիթից։ Նա արդէն բակումն էր, արդէն մօտ էր դուռը բանալու և փողոց դուրս դալու, երբ Սուսանը վազէ վաղ նրան հասաւ, կախուեց փէշից, աչքերը լուած, դողդողալով ու չնչակուուր ճչաց.

— կաց, կաց, չեմ կարող, չեմ կարող, ասա, ազաշում եմ, ասա ինձ, ով է այն լեռնալանջի վիրաւորը.

— Տէր Աստուած, այդ հին բան է, շատ հին. ամենքը դիտեն, հին երդ է, ամենքն են երդում։

— Հին է... Սուսանը կարծես մի փոքր հանգստացաւ, որ «բանը» այնպէս հին է։

— Հին է, մէրիկ, բանի՞ տարի է ինչ երդում են ամեն տեղ։

— Ո՞վ է, ով է այն ջիւան վիրաւորը։

— Զը դիտես, արարաշխարհը դիտէ

Գարահիսարի բանը, եաման բան էր, վէրան մնայ Գարահիսարը, բանի՞սն էին...
— Ո՞վ է ջիւանը. ըեղ ասում եմ, անողորմ...

— Միթէ ըլ դիտես, Սաքօն է:
— Սաքօն... ուսւհ, անսաստուած, նզովք ըեղ. այդ ինչ ասիր, նզովք քո շրթունքներին, քո եկած ճանապարհին, քո ծննդին... սուտ է, սուտ է, Ֆիրամէրը կայ, ազօթքս, մոմերը, սուտ ես խօսում, չար սատանան ես դու, դուրս, դուրս, դուրս... բայց չէ, կաց, կաց, աղաչում եմ, սուտ էր, այնպէս չէ, դու սուտ ասացիր... լուռ է, լուռ է, անողորմը, դէ դուրս, դուրս, բէխէր ստքդ կոտրուէր, դու եկել ես ինձ տանջելու, դեւերի բաժին դառնայ քո հոգին, դու սուտ ես ասում, դուրս...

Օտարականը կարծելով՝ որ կինը գժուեց, գլուխը կորցրած դուրս փախաւ փողոց առանց յետ նայելու, իսկ Սուսանը շարունակում էր ճչալ և երկինք աշաղակել։ Երբ նրա ձայնի վրայ հարեւանները չորս կողմից հաւաքուեցին, Սու

սանը դեռ վազվում էր բակում խելաշգարի պէս, կուրծքը բաց արած, չորացած ստինքները բռնած ցոյց էր տալիս երկնքին.

—Նայիր վերից կապուտուոր Տէր, նայիր էս չորացած աղբւրւներին, բանիսին կերակրեցի սրանցով, քանիսին իմ միս ու արիւնը տուի, մեծացրի, էլ չը կան, չը կան, ոչ մէկը չը կայ... Մէկ Սաքօն է, Սաքօն, էն սարերի արծիւը, էն էլ... ի՞նչ ասաց անիրաւը... ճիշտ է, դու չը տեսամբ... Սաքօն, սարը մթնեց, արծիւը սեւ կապեց, ճիշտ է... բա դու ի՞նչ ասիր, ի՞նչ արիր, մայր եմ, չէ մայր էի, էլ մայր չեմ, ութը ծնունդ, ութը երկունք, հազար ցաւ, հազար խոց սեւաւոր սրտիս... ունեհ... Եւ նա ջարդուած ընկաւ խնձորենու տակ, ծեր գլուխը կախուեց կըրծքին, արցունքը թափուեց, թափուեց, իսկ վերեւից ծառի վերջին, դեղնած տերեւները մէկիկ մէկիկ մաղլում էին նրա զլիսին և ճիւղերը մերկ ու դողդոջուն օրորւում էին աշնանային սառն քամու առաջ:

V

Սուսանը հիւանդ է, Սուսանը մեռնում է...

—Հին բան է որդի, հին բան, ասում էր նրա գլխավերեւը նստած ծերունի քահանան, որ եկել էր հիւանդին վերջին միսիթարութիւնն ասելու, վերջին հաղորդութիւնը տալու:

—Հին բան է, կրկնում էր մեռնողը, ծիրամէրն էլ գիտէր, տէրտէր ջան:

—Աշխարհ գիտէր, որդի, քեզանից բացի ամենը գիտէին:

—Դու էլ գիտէիր:

—Իէ որդի, թէ բեզ էլ ասէինք ի՞նչ օգուտ, ցաւդ գրանով չէր թեթեւանայ. այնքան մայրեր լաց եղան, այնքան սրտեր փշուեցին, այնքան գլուխներ սեւ կապեցին, էհ, ի՞նչ անենք, մեր ճակատագիրն է:

—Մեր ճակատագիրն է, որ էսպէս արուն-արցունք բամենք, մղկտանք... թող առաջուց ասէիր ինձ, թէ մեր ճակատագիրն է. քանի՛ տարի է, մաշեցի ժամի

դուռը գնալ գալով, մատներս տրորեցի
մոմ վառելով, Տիրամէրը ժպտում էր,
ժպտում, իսկ դու հիմա ես ասում մեր
ճակատագիրն է:

— Եէ ի՞նչ ասէի, որդի, աղօթում
էիր, դրանից ի՞նչ զնաս, աղօթքը սուրբ
բան է, հաւատում էիր, հաւատը քաղցր
բան է, ես ի՞նչպէս քո և Աստծու մէջ
ընկնէի. երեւի նա ուզում էր, որ դու
չիմանաս «Էն բանը»:

— Տիրամէրը խաբեց, նա խօմ կա-
րդղ էր երազով ինձ յայտնել, կը դար
երազիս ու կ'ասէր՝ «Եւ կապիր Սուսան,
սեւ կապիր, արեւդ խաւարեց, օջաղդ
մարեց», բայց նա այդ չ'ասաց, նա խա-
բեց, ժպտացու խաբեց:

— Օօ, մի ասն այդ, որդի, լսիր ինձ,
ամենքս էլ մահկանացու ենք, հանդեր-
ձեալ կեանք կայ, հաշիւ ու համար ու-
նենք տալու, դու էլ, դէ տարիքդ անցած
է, ճաշակուիր որդի, ասա՞ մեղայ Աս-
տուծոյ:

Պառաւը գլուխը տարուքերեց որպէս
մերժման, անհամաձայնութեան նշան.

— Զէ, չէ, Տիրամէրը խաբեց, ես
խոռվ եմ ժամից, պատարագից, Տիրա-
մօրից, երկնքից, թնդ այսուհետեւ դժոխ-
քի բոցերին բաժին գառնամ:

— Մի ասիր այդ, որդի, մի ասիր,
հոգուղ մեղք մի անիլու:

— Ես հոգի չունեմ, իմ հոգին մո-
խիր է գարձած դարդի կրակից:

Տամներորդ անդամն էր քահանան
կրկնում իր առաջարկութիւնը, տամնե-
րորդ անդամը նա ձեռքի հաղորդութիւ-
նը մօտեցնում էր նրա շրթունքներին և
Սուսանը միշտ մերժում էր, նա խռով էր
Աստծուց, Տիրամօրից... արդէն ամիսներ
էր, որ նա էլ եկեղեցի չէր գնացել. սար-
սափելի գոյժից յետոյ նա մի անդամ, մի
վերջին անդամ երերալով գնաց, կանգ-
նեց Տիրամօր պատկերի առաջ, առանց
մոմի, առանց աղօթքի և բոլոր ձայնով
ճչաց.

— Դու ինձ խաբեցիր, Տիրամէրը
Ժամաւորները յետ նայեցին, ամենքը
կարծեցին թէ նա խելագար է: Սուսանն
առանց ուշը դարձնելու իր շուրջը, դուրս

եկաւ ժամից, գնաց, փակուեց իր տանը,
մինակ ու սդաւոր:

Զատկին քահանան եկաւ տունն օրհա-
նելու, մխիթարութիւն խօսելու, մերժեց.
այժմ էլ հիւանդ ընկած անկողնում, նա
մնոնում է և չի ուզում հազորդուել:
Հարեւանուհիները սոսկում են այդ ա-
նաստուածութիւնից, նրանք հաւաքուած՝
համոզում, խնդրում, աղաչում են, ի զ՞ւր,
Սուսանն անդրդուելի է, ծնօաները փակ
և դէմքը վճռական:

— Զէ, չեմ ուզում, դիտմամբ չեմ
ուզում, որ հոգիս սատանայի բաժին
դառնայ. ես կը կանգնեմ Աստծու դահի
առաջ և Տիրամօրից գանգատ կ'անեմ և
յետոյ այնպիսի բաներ կ'ասեմ; այնպիսի
բաներ: Այ էս չորացած ստինքներս ցոյց
կը տամ ու կ'ասեմ, ինչ արիր, Տէր, մե-
ռանք, փոթոթուեցինք փարում, ճշացինք,
աղերսեցինք, ձայներս աստղերին հասաւ
և դու մեզ չը հասար. հիմա տար ինձ
կպրի կարասը, ես ի՞նչ, ես մի կտոր բոց
եմ, ձգիր ինձ կրակի մէջ, բոցը բոցին ի՞նչ
կ'անի. հա, կպրի կարասը, ես այնտեղ կը

պլալամ, կը վառուեմ ու կ'սպասեմ, որ
ինձ նման սեւաւոր բոլոր մայրերը բոց
դառած համնեն ինձ և մենք ամենքս
միասին հրդեհ կազմենք, այնպիսի հըր-
դեհ, որպիսին վարումն է, վէրան, սեւ
վաթանում, թող երկինքն էլ վառուի նրա
պէս, թող երկինքն էլ մոխիր դառնայ:
տար, տար ինձ կպրի կարասը, ես բոց
եմ, մի կտոր կրակ: Այ այսպէս կ'ասեմ:

— Որդի, աղաչում եմ, ասաց լացա-
կամած քահանան, այդ ի՞նչ ես ասում,
տես, էս ծեր տեղովս ես քեզ աղերսում
եմ, մի ասիր այդ, քեզ համար ես էլ
պատասխանատու եմ Աստծու առաջ:

— Պատասխանատո՞ւ ես, դու էլ ասա
Տիրամէրը խաբեց. մայր էր, սիրտ պիտի
ունենար, բայց խաբեց. ինքը երջանիկ է,
ինքը զաւակը կըծըին սղմած ունի, իսկ
ուրիշին խաբեց...

— Տիրամէրը:

— Հա Տիրամէրը:

— Նայիր այստեղ:

Քահանան ցոյց տուեց իր Աւետա-
րանը, նրա երեսի խաւելութիւնը: Խա-

չուած Քրիստոսի ոտների տակ սգում էր
Աստուածածինը մի խուրձ սրեր մխուած
սրտում:

—Ճանաչում ես, շարունակեց քա-
հանան մատը դնելով Աստուածածնի
վրայ, սա էլ է Տիրամէր:

Պառաւը նայում էր աչքերը լայն,
բերանը բաց, զարմացած:

—Նայիր, նայիր, երկար նայիր, ա-
սում էր քահանան, դու միայն երջանիկ
Տիրամէրն ես տեսել, տես և այս սգա-
ւոր, այս գժբաղդ մայրը: Պառաւը ձգուեց
առաջ շնչակտուր, դողդոջուն ձեռքերը
մեկնեց և բռնեց Աւետարանը, մօտեցրեց
աչքերին:

—Տես, քանի սուր է մտել սիրտը,
չէ այն էլ նրա որդին է խաչուած վերե-
ւում:

—Հա, հա, նրա Որդին է խաչուած:

—Նա մեռնում է աշխարհի համար,
մեր բոլորի համար:

—Նա մեռնում է մեր բոլորի հա-
մար... իսկ իմ Սաքճն...

—Սաքօն, որդի, էհ, նա էլ մեր սե-

ու վէրան աշխարհի... Այդպէս է որդի,
մայրերը ծնում են երկունեով, պահում
են ցաւերով, մարդակեր աշխարհը տա-
նում է, տանում, ինչ անենք:

—Մայրերը ծնում են երկունեով,
պահում էն ցաւերով ու աշխարհը տա-
նում է. հա, հա, տանում է անողորմ
աշխարհը:

—Սաքօն էլ գնաց, ուր շատերն են
գնացել նրանից առաջ, եւ ուր շատերն
էլ կ'երթան նրանից յետոյ, ինչ անենք:

—Սաքօն էլ գնաց, ուր սա է գնա-
ցել, հա, տէրտէր, էս խաչի վրայ Մեռ-
նողլը:

—Հա, որդի, նոյն ճանապարհով,
աշխարհի համար:

—Մեղայ Աստուծու, մեղայ Աստու-
ծու, ես մեղաւոր եմ. պառաւի ձայնը
կերկերաց, արցունկըները թափուեցին, նա
Աւետարանը սղմեց շրթունկըներին՝ մրմրն-
ջալով,

—Խեղճ մայրեր, խեղճ մայրեր...



Amen. Now I say unto you, If ye have faith as
a grain of mustard seed, and if ye say unto this
mountain, Remove hence; it shall move. And nothing shall
be impossible unto you. And all the people were
amazed, and they said, This man is indeed a prophet,
and God is with him.

¶ And when Jesus had finished these words, he
lifted up his eyes to heaven, and said, Father, the
time is come; glorify thy Son, that thy Son may
be glorified,

ՀԵՂԻՆԱԼԻ ՀԱՍՏԵՐ

առանձին գրեթե լոյս տեսած աշխատութիւնները.

	Բ.	Կ.
1. ՀՈՅ ԿԻՆԸ	.	— 40
2. ԲԱՇՕՆ (սպառուած)	.	— 5
3. „ՊԱՏԿԵՐՆԵՐ“ „	.	1
4. ՄԻՒԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ	.	— 5
5. ԽԵՂՁԵՐԸ	.	1 —
6. ՄԱԳՐԵՐԸ	.	— 15

Գինն է 15 կոպէկ

Հեղինալի հասցեն՝

Тифлисъ, Редакція „Мурчъ“.

ՀՀ Ազգային գրադարան



NL0313035